Արձանագրություն N 3
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/101» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 22.08.2019 թ.
ժ. 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Միլիտոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Քերոբյան (ԳԱ), Վ. Աղաբեկյան (ԳԱ)
Ե. Բազեյան (ԲԱ), Հ. Հակոբյան (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

I. **ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին**
(Վ. Միլիտոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

1.2 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «ՋԻԹԻԷՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիներին համախառն եկամուտ չունի, որը համաձայն հրավերի 2.5 կետի 3-րդ ենթակետի չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Արաման Սթոուն Սթայլ» ՍՊԸ -ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 86242 /ութսունվեց հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ:

1.3 Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կրգի 47-րդ կետով՝ նիստը կացեցրեց և առաջարկեց «Արաման Սթոուն Սթայլ» ՍՊԸ –ին և «ՋԻԹԻԷՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

1.4 ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կրգի 48-րդ կետի՝ մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Վ. Միլիտոսյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց՝ հանձնաժողովի նիստը հրավիրել Մասնակցի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունը ներկայացնելու կամ չներկայացնելու օրվա հաջորդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Վ. Միլիտոսյան
Անդամներ՝		Ա. Քերոբյան
		Վ. Աղաբեկյան
		Ե. Բազեյան
		Հ. Հակոբյան
Քարտուղար՝		Գ. Հուրոյան